

ՄԵԼԿ

Տարեկան դիմել 10 րուբլ, կէս տարեկան 6 րուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն ընդունվում:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաղաղանկար բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ազատագրութեան
Ներքին Երկր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նա-
մակ Թիֆլիսայից. Արտաքին Երկր. — ԽԱՌՆ ԼՈՒ-
ԲԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Գեղարքուն. Ընտա-
րութիւնը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՂԱՏԱԳՐՈՒՄ

Մայիսի 7-ին

Օրէնսդէս վրա այս տարի Ներքինից մեծ քանա-
կով խնայելու համար ինչպէս որ մի տա-
րի այդքան չէ դնացել, և որ նշանաւորն է, այս
անգամ ուղարկողները նոյն իսկ իրանք արդիւ-
նաբերող այդեղանքներն են: Յորենի արտաճանա-
թիւնը օրից օր թուանում է. նկատելի չէ այլ ևս
անցնել տարվայ ապրիլ և մայիս ամիսների այն
կենդանի շարժումը, երբ այստեղի կայարանում
պարբերաբար օրական աւելի քան 30 վագոն միմի-
ային հացահատիկ էր բարձրվում Սա գուցէ նշանա-
կում է, որ անցնել տարի Ներքինեան և Ալեք-
սանդրօպօլեան նահանգները արտաճանել են ոչ
այնքան, որքան կարող էին արտաճանել ամին մի
տարի, այլ աւելորդ և մի քանի տարիներից հա-
ւաքված պաշարը Այդ ամբարները դեռ չեն վեր-
ջացել, դիտենք շատերը սպասում են քրէնների
էփանաւորում, իրանց ապրանքները կայարան
հասցնելու համար. բայց որքան էլ մնացած լինեն,
ներկայ տարվայ ցորենի արդիւնաբերութիւնը եր-
բէք չէ կարող համեմատվել անցնել տարվայ
հակադրական արտաճանաթիւնը: Գեո. առաջիկայ
տարին գուցէ աւելի իր պակսի, քանի որ մինչև
նոր ցարը մնացորդ ամբարներն էլ անկասկած
դատարկված կը լինեն:

Տնտեսական արագութեամբ գծի վրա ամին կողմ
կայարանները նորոգում և պարտաւորում են. ներ-
կայ ամսին սպասվում է Պետերբուրգից կառա-
վարական կոմիտեա, որը պիտի դաջ քննիչու
Անդրկովկասեան երկաթուղի: Բոլորն էլ համա-
րեա դրանով են զբաղված: Կայարանի չորս կող-
մը ներկում են, սենեակների ներսը սպիտակաց-

նել են տալիս. ամին կողմ ծառեր, ծաղիկներ են
անկում: Իսկ ողորմելի փաճառականը ձեռքը ծո-
ցում իր փաճառատան մէջ նստած և աչքերը
ջուր կտրած սպասում է թէ երբ վերջապէս այդ
կանաչ կարմիրով զարդարած կայարանից իր ա-
միս առաջ յանձնած ապրանքը պիտի ստանայ,
այն էլ կէսը փութ և կէսը ոչնչացած:

Ներկա ամիս առաջ երկաթուղու ընկերութիւնը
յայտարարեց լրագիրներում, որ մարտի 1-ից ըս-
տի կայարաններում գործադրութեան մէջ է մըս-
նում ընկերութեան նոր հրատարակված տարիֆը:
Որովհետև հինգ տարի է շարունակ զանգա-
վում էին, որ անդրկովկասեան երկաթուղու և սա-
կազինը ապրանքների համար չափից դուրս թանկ
է, հետևաբար իւրաքանչիւր որ իրաւունք ունեն
սպասելու որ նոր կանոնադրութեան մէջ դնեն
պակասեցրած կը լինէին, բայց որքան դարձնալի
է, որ ամենայն մանրամասնութեամբ հին տարիֆ-
ների հետ համեմատելուց յետ քայլի մի երկու ա-
մենամանշան փոփոխութիւններից երեքս, որ
գա մի և նոյն է, ինչ որ էր առաջ. դեռ մի քա-
նի առաքելաների վերաբերութեամբ աւելացրած է
էր, հետևաբար թող ոչ որ չը խաթմի լրագիրնե-
րի մէջ մեր երկաթուղու ընկերութեան հասա-
րակութեան աչքին փչած այդ թուղից:

Ա. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տնտեսական ուստաց լրագիրներին հետագրում են
որ մայիսի 8-ին վախճանվեցաւ Պետերբուրգում,
երկարատե հիւանդութիւնից յետոյ, Կոլլաւեան
կոտաւարդապետի, իշխան Գոնդոլով-Կոնստանտին
ամուսինը՝ Իլյանովնայի Նաղթիւղա Անդրեյեւիչ
Գոնդոլով-Կոնստանտին:

Մեզ գրում են, որ Նոր-Բայազետի գաւառի
Գեօղարքուն գիւղում մի մարդ կուր ունենալով
մի 60 տարեկան ծերունու հետ, մի աքացի է
խփում ծերունու փորին և ծերունին իսկոյն միու-
նում է:

Այս օրերս, ինչպէս մեզ գրում են, Նոր-Բայա-
զետի գաւառի փաշապետը գիւղում մի մարդ ի-
րան խեղդել է, կախվելով իր դարձանաւորում:

և իսկապէս անուշանելի խնդրի վախճանին: Աչ-
խատելով «տանի» իր գործը քաղաքի դատարա-
նում, գիւղացին անխնայ կերպով վաճառում է իր
կոպէկները կաշառատութեան և այլ օրինաւոր
կամ ապօրինի պահանջմանքների վրա ու շատ
անգամ, այդ բոլորից յետոյ, առանց մի շահաւոր
հետևանքի հասնելու, նա փոխանում և կրկին վի-
րադաւում է զիւր: Վերադառնալով գիւղ, իրար
հետ վեճ ունեցող հարևանները դեռ երկար չա-
րունակում են իրանց հաշիւները և շատ անգամ,
այդ վիճաբանութեան մէջ բանը հասցնում են
կուր, զուր ու թե կոտորելու, որից յետոյ կըր-
կին դէպի քաղաք, դատարան, ինդիւր, բանտար-
կութիւն և այլն: Ահա այսպէս է սկսվում գարու-
նը մեր գիւղացու համար: Նախով գիւղացու վրա
այդ աղակալի դրութեան մէջ, տեսնելով նրա
տմարի վարմունքը իր համարիւղացու, իր դը-
րացու և շատ անգամ նոյն իսկ իր աղքատների,
եղբոր հետ, մարդ սկսում է զղջալ: Եւ մինչև այժմ
այնքան բարձր գաղափար ունեն նրա աղու-
թեան և առաքելութեան մասին: Եւ իրաւ, շատ
հետաքրքիր է պարզել այն հարցը, թէ իմպայէս
ինչպէս է կայանում գիւղացու. զլխաւոր արժա-
նաւորութիւնը. ինչ բարոյական առաւելութիւն
ունի գիւղացին քաղաքացու վրա, որով նա ար-
ժանացել է շատերի անկեղծ համակրութեանը:
Մենք տեսնում ենք, որ նա շատ յայտնի հանդի-
մանքներում ընդունակ է կատարել ամենապա-
խարակիլ գործեր, որ նա իր չափերը պաշտպա-
նելու համար դիմում է շատ ստոր և արհամարհելի
միջոցների: Մենք տեսնում ենք, որ նա հասարակ
և ամենաշնչին մի պատճառի համար, պատրաստ

Ասում են որ խեղովոր խելագար է եղել:

ԱՌԱՎԱՐԱՐՈՒՄԻՑ մեզ գրում են հետևեալը: «Ով
որ սրանից 6 կամ 7 տարի առաջ տեսել է Ա-
խալաբաքը, նա այժմ ամենակին չի էլ ճանաչի-
այդ քաղաքը, այն . աստիճան փոխված է մեղա-
նում ամեն բան, և այն էլ, ի հարկէ, դէպի վա-
տը: Եւ եթէ կայ մի որ և է միմիտարական բան
այստեղ, դա մեր երկուսու ուսումնարանն է, որ
չնորհով հոգաբարձուների և ուսուցիչների խմբի,
բաւական բարեկարգ դրութեան մէջ է: Բայց այն
երկուսարդութիւնը, որ կար մեղ մօտ 6 կամ 7
տարի առաջ, այլ ևս չը կայ այժմ: Շատերը ի-
րանց ապրուստը հայթայթելու համար թողնելն
իրանց ծննդավայրը և դնացին հեռու երկրներ
փոխ վաստակելու համար»:

Մեզ հաղորդում են Ախալաբաքից, որ անցնալ
ձմեռը մի անտուր. խստութեամբ տեսն մօտ 8
ամիս և Ախալաբաքի չքաւոր ժողովուրդը ստիպ-
վեցաւ այդ ամբողջ ժամանակամիջոցում մնալ
փակված ու անգործ բնակարաններում, և անդա-
դար վառել վառարանները:

ՇՈՒՆԱՎԵՐԻՑ մեզ գրում են: «Մեր Ղարա-
Մուրադ թաղի Պետրոս և Պողոս եկեղեցին, որ
կառուցված է Թիֆլիսի Մոդուս եկեղեցու յատա-
կազմով, երկար տարիներից յետոյ վերջապէս
այս տարի աւարտած կարելի է համարել: Եկեղե-
ցու զուրկը վերջապէս թիթեղով ծածկեցին: Ար-
դէն եկեղեցուն տուած է ժամանացութեան իրա-
ւունքը, միայն մինչև այժմ եկեղեցու մէջ պա-
տարադ չէ եղել: Ժողովուրդը խնդրանքով մօտ օ-
րերս սրբազան առաջնորդը զալու է այստեղ,
վերայիշեալ եկեղեցին օծելու նպատակով»:

Ալեքսանդրապոլից պ. Ե. Ղազարեան գրում է
մեզ որ նա թարգմանել է ռուսերէնից հայերէն
Տարգմանիչ «Նախընթաց օրը» (Накануне) վե-
պը և աշխատում է չուտով հրատարակել յիշեալ
վեպը:

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ
Սուրաբի անցքի մօտ նախախտողական չինելուն
բացի Նօթելից և մի քանի լուրջ գործարանատե-

րերից, կը մասնակցեն և մի քանի ուրիշ մանր
գործարանատեքեր:

Ինչպէս յայտնի է ծխախոտի միջապահառու-
թեան նախագիծը առ այժմ հաւանութիւն չը
դառն. Պետերբուրգի օրէնսդրական բարձր չըջան-
ներում: Մենապահառութեան փոխարէն, ինչպէս
հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, մտա-
դրութիւն կայ բարձրացնելու ծխախոտի ակցիդը:
Մենապահառութեան հարցը յետաձգվում է մի
քանի տարով:

Ռուսաստանից շարունակում են զալ գաղթա-
կաններ, որոնք անցնելով Թիֆլիսի վրայով դը-
նում են բնակութիւն հաստատելու Ղարաի նա-
հանգում: Թէ ինչ յուսով և ինչ սպասելիքներով
են թողնում իրանց բնակութեան տեղերը այդ
մի կտոր հացի կարօտ ընտանիքները,—այդ նոյն
իսկ գաղթականներն էլ գիտեն:

«Մշակը» հատով ծախվում է (7 կօֆէկով) Թիֆ-
լիսի հետեալ տեղերում, Տ Ե Բ Ե Կ Ե Կ Ե Կ Ե Կ Ե Կ
ի ծխախոտի մագաղանում (Վոլկան) հիւրա-
նոցի տակ), իսկ դ և կ է լ ի լրագրական գործա-
կալութեան մէջ, Ս Ե Բ Ե Կ Ե Կ Ե Կ Ե Կ Ե Կ Ե Կ
ծախում է պ. Բ և պ ի ն օ վ ի լրագրական գոր-
ծակալութիւնը Անդրկովկասեան երկաթուղու բո-
լոր փոխգնդներում:

Մայիսի 8-ին, ուրբաթ օր ձեռնածու Լէնց
պարսից հիւպատոսի խնդրով մի ներկայացում
տուեց յօդուտ պարսկահպատակ աղքատ աշա-
կերներին: Ներկայացումից դուռ արդիւնք դոյա-
ցաւ մօտաւորապէս 250 րուբլի, որը և յանձն-
ված է ըստ պատկանելոյն:

Պետական կալուածները միմիտութիւնը պատ-
րաստում է մի նախագիծ, Կոլլաւեի աղքատական
հողերի վարչութիւնների մէջ մի քանի նոր փո-
փոխութիւններ մտցնելու համար: Ենթադրված
փոփոխութիւնները գործադրութեան մէջ կը
մտցնվեն 1888 թվի յունվարի 1-ից:

տաւոր է մասնակցել աշխատութեան և այլ բոլոր
գործերի մէջ, որպէս և սղամարդը: Ընտանեկան
բռնութիւն ասած բանը գիւղացու համար անհաս-
կանալի է: Նա բոլորովին աղքատ և մաքուր է
այն ճիշին, բռնակալական վատ, կեղտոտ ինս-
տիտուտներից դէպի իր ընտանիքը և դաւանները,
ինչ որ սովորական բնաւորութիւն է քաղաքա-
ցու համար: Գիւղացու կենցաղը պարզ է, նրա
ընտանեկան պահանջները քիչ են, նրա ծնո-
ղական և դատարարական պարտականութիւն-
ները շատ պարզ և հասկանալի են նրա համար
և այս պատճառով նա շատ հեշտութեամբ կարո-
ղանում է բաւականութիւն տալ իր այդ պահանջ-
մունքներին, առանց սրա և նրա մարդկային ինք-
նասիրութեանը դիպչելու: Ինչ որ անում է հայրը,
նոյնը անում են և որդիքը, առանց խտրութեան,
առանց զգալու իրանց առաւելութիւնը կամ պա-
կասութիւնը և այսպիսով փոքր ժամանակից սո-
վորում են նայել ծնողի վրա, որպէս մի ընկերի,
բարոյապէս հաւատար մի անձնաւորութեան վրա:
Ահա այս հաւատարմութեան և անկախութեան ո-
գին է, որ կաղմում է գիւղացու զլխաւոր առա-
քելութիւնը, որով նա զանազանվում է քաղաքա-
ցուց:

Որքան որ պարզ և անարեւոտ է գիւղացու
կենցաղը, նոյնքան էլ բարդ և բաղադրովան է քա-
ղաքացուն և նոյնքան խճճված ու բաղադրված
են նրա ընտանեկան և հասարակական յարաբե-
րութիւնները: Քաղաքացու կենցաղի բաղադրի-
կաւորական պահանջմունքները օր աւուր ուսու-
կանալով, ճշնում և ոչնչացնում են նրա մէջ
աղաւորութեան և անկախութեան զգացմունքները,

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

ԳԻՂԱՅՈՒՆ ԲՆԱՎՈՐՈՒԹԻՒՆԸ

Գարունը որ բացվում է, մարդ կարծես տկա-
մայ սկսում է մտածել գիւղացու վրա: Ներկա-
տե Զմեռնային մուսալութիւնից յետոյ, զարմանք
նորից սկսում է գարնանը այսպէս կոչված «գիւ-
ղական հարցը» իր անվերջ զանգամներով, դաւե-
ղաւարացով, ծնծ ու քաշով:

Ապրուստի խնդիրը ստիպում է մեր գիւղացուն
զգաստանալ իր ձմեռնային թուլացնող անգործու-
թիւնից և նա կտմար-ակամայ դուրս է դալիս
դռնից և սկսում է լարել իր ոյժերը: Սակայն
ոյժը լարել աւելում է հասկանալ մի-
այն, որ նա սկսում է աշխատել. ընդհակառակ,
դեռ իր հողային աշխատութիւնը չը սկսած, գիւ-
ղացին ստիպված է նախ ոյժերը լարել իր հարե-
ւանի, դրացու, իր ընկերոջ դէմ: Այսպէս շարու-
նակ մի քանի շարքներ անցնում են, մինչև որ
մեր գիւղացին կարողանում է ազատել իր զուրկը
լարմանից, աղմուկներից, որ ամենայն տարի
բարձրանում են զանազան հողային և այլ գիւղա-
տնտեսական անյարմարութեանց պատճառով:
Հէնց այդ աղմկալի դրութիւնն է, որ ստիպում է
գիւղացուն յաճախ թողնել գիւղը և մի քանի օ-
րերով մնալ քաղաքի զատարանի դռներում, սպա-
սելով իր գործի,—հողային այս կամ այն կնճուտ

ԳԱՆՁԱԿԻՑ մեկ դրոմ են մայիսի 8-ից, որ այդ քաղաքը հասել է թիֆլիսի հայ թատրոնի ղեկավարների տիկին Զարե: Գանձակում չուր է տարածված որ այդպիսի պիտի գայ քանի մի օրից յետոյ և մեր յայտնի ղեկավարն, պ. Աղաման:

Արարիկ, ամսիս 10-ին, ուսուցիչ դաստիարական խմբի ներկայացումներին սկսեց մասնակցել Պետերբուրգի կայսերական թատրոնների առաջին ղեկավարները Մարիա Սավինա: Տ. Սավինայի առաջին անձնակազմը չը պետք լինի հայ հասարակութեանը, նա առաջինն էր որ 1878 թվականին Պետերբուրգում յօգուտ թիւրքա-Հայաստանից գաղթած հայերի կազմեց մի նուագահանդէս, որի հասոյթը մինչև 3 հազար լուրջու էր հասել: Տ. Սավինա իր առաջին դերերի համար ընտրել էր Պալիերոնի «Տաղաւորութեան աշխարհում» կոմիդիան, միայն Ալեքսանդրովի ձեռքով մի փոքր փոփոխված և յարմարեցրած ուսուցիչ կեանքին: Տ. Սավինա ունեցաւ անհայտն աշխարհում, վարձատրվեցաւ անկրկնապէս ծախարարութիւններով և ստացաւ հասարակութեան ու թատրոնի դերերիցայի կողմից մի քանի գեղեցիկ փոփոխութիւն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍԱՅԻՑ

Կ. Պոլիս, 2 մայիսի

Թէ ինչ է դմեղ զբաղեցնող օրուան խնդիրը, ձեռք զբաղեցնող է դուռնակը: Մենք ու հոռոմական հայը կուրի բռնուած ենք. կրքերը վերադարձնելու բարեբան: Ապրիլի 27-ին, երկուշաբթի օր, «Արեւելք» կը հրատարակէ հետեւեալ լուրը: Լուսաւորչական հայ մը, որ կաթողիկ հայոց Պատրիարք Ազարեան Գերապոսեանին խոնարարն է, վերջին օրերու երեկոյ մը ներկայանալով Պատրիարքին, կը յայտարարէ թէ յանկարծ ուշ առնել իրեն ծանօթ երիտասարդ մը խելագարած է, և կը խնդրէ որ զնա հոռոմական հայոց Գալուսեան հիւանդանոցը դնեն: Պատրիարքը կը հարցնէ թէ խելագարուածն է՞ ծանօթանալան է՞ Այո, կը պատասխանէ խոհաբար:—Այն ատեն չըլլար, կըսէ Պատրիարքը:—Այս լուրը կը հրատարակուի երեքշաբթի, յաջորդ օրը հերքում չը տրուի, և ասկայն նոյն օրն «Արեւելք» խմբագրութեան քննութիւն մը կը բանաւ և հետեւեալ օր, չորեքշաբթի «Արեւելք» կը հրատարակէ խիստ կծու յօդուած մը ընդդէմ հոռոմական հայոց Պատրիարքին: «Արեւելք» ստատիկ կը պոխարակէ հոռոմական պատրիարքին խտրողական ոգին, միթէ ամենքս ալ հայ չենք լուրով: Եւ բայց աստի այնպիսի պարագաներու մէջ միթէ կրօնից և ազգութեան խտրութիւն կարելի է դնել. ոչ ապաքէն լուսաւորչական հայոց հիւանդանոցի մէջ բողոքական, հոռոմական հայ հիւանդներ կան. մինչև իսկ տաճիկ եթէ դալ

առանց խտրութեան կրնանուի, ուր մնաց խտրութիւն ընել զանազան կրօնից պատկանող հայոց մէջ:

«Արեւելք» խմբագրականն մեծ ցնցում պատճառեց, յօդուած սկսաւ տրորել: Հոռոմական հայոց հիւանդանոցի հոգաբարձութիւնն հերքում առաւ, բայց «Արեւելք» այդ հերքումին պատասխանեց ըսելով որ ինչ է հոգաբարձութիւնը և քանի որ Ազարեան Պատրիարքը կը լռէ, ըսել է որ եղբուքները ճիշդ է: Բայց Պատրիարքը խոնարարը մակ մը կը հրատարակէ (թէպէտ ինք զրեւ չը գիտէր) ըսելով թէ այդպէս չէ եղած, այլ ինքն երբ առաջարկել է Պատրիարքին, Պատրիարքը պատասխանած է, որ իր գիտնալու գործը չէ, այլ հոգաբարձութեանն:—Սակայն այդ խոնարարն էր, որ ներկայանալով «Արեւելք» վարչութեան երկուստեք ըրած էր թէ Պատրիարք Ազարեանը մերժած է այդ աղան, լուսաւորչական է ըսելով, և թէ ինք, խոնարարը, այնքան բարկացած է, որ յանձնառու կըլլայ ամեն ինչ զոհել քան թէ լռել:

Մեր կողմանէ չենք կրնար ոչ ճիշդ, ոչ սխալ ըլլալը հաստատել, քանի որ վկայութիւն տուողներն այսպիսի մարդեր են: Բայց կէտ մը կայ, ժողովուրդը բարեբան է. հոռոմական հայը չեն կրնար ընդունել, որ իրենց Պատրիարքը խտրութիւն մը ըրած լինի: Ուրեմն եղբայրասիրական գաղափարներն այնքան յառաջացած են, որ հոռոմական հայը կը վերջին պահով խտրութեան մը համար: Մենք ևս չենք կրնար ըմբռնել թէ հոռոմական հայը խտրութիւն մը ընել կարելի համարեն, քանի որ մենք ալ խտրութիւն մը ընելու գաղափարէն հեռու ենք: Կար ժամանակ մը, որ ամենապարզ իրողութիւն մը պիտի համարուէր այսպիսի խտրութիւն մը. յառաջագիտութիւնն զգալի է:

Հոռոմական հայոց հակահաստիքնան կուտակեցութեան բեկորներու պարագլուխներն Հաստիքնան հետ հաշտուելու փորձերը կրնեն Ազարեան Պատրիարքի յոտով հրաւիրանայ վրայ: Ազարեան Պատրիարքը յայտարարած է թէ Պապը վճարած է ջնջել Հաստիքի օրով տրուած ու է վէրս ու էր ուս կոնդակը:

Այսօր Պոլսէն կազմուողի Վերջեան Գալուսեանի, որ հակահաստիքնանց զօրաւոր պիտի էր: Վերջեան էֆենդի մի քիչ քաղաքական յանդուգն լեզու գործածած լինելուն համար Պոլսէն կը հեռացնեն զինքն:

Վաղը հանդիսատար կերպով պիտի բացուի Բերայի աղջկանց արուեստանոցը, որոյ տնօրէն պիտի լինի—գէթ այսպէս կըսուի—տիկին Մատակեան, որ ջերմ ընդունելութիւն կ'առնէ Պոլիս, մանաւանդ Բերայի չըջանալներուն մէջ:

Հայկակ

ճառի պատրաստ է նոյնպէս չորեքշաբթի և ստորանալ մարդոց առաջ, ինչպէս և քաղաքացիներն ինչ կերպով պէտք է համաձայնեցնել զիւրացու բնաւորութեան այս գլխաւոր հակասութիւնները: Մէկ զեպքում նա երևում է մեղ իր ամեն զեպքով և առաքելի յատկութիւններով, միւս զեպքում նրա մէջ մենք նշմարում ենք այնպիսի կըրքեր, այնպիսի ստոր և անբարոյական յատկութիւններ, որոնք միանգամայն հակառակ են նրա միւս ազնիւ յատկութեանց հետ: Անվճարի հոգեբանական ճշմարտութիւն է, որ երբ մի գաղափար ընդունվել և սովորականութիւն է դառնում մարդու համար, երբ մարդ համոզված է իր այդ գաղափարի ճշմարտութեան, անխալալականութեան մէջ, —երբեք չէ կարող պատահել, որ նա հեշտութեամբ, առանց մի որ և է դժուարութեան դաւաճանէ, փոխէ այդ գաղափարը: Եթէ զիւրացին իր ազնիւ յատկութիւնները ընդունած ու սովորականացնել են, որպէս բարոյական համոզմունք, եթէ նա իր ընտանեկան և հասարակական պարզ, առաքելի վարկութիւննց մէջ լինէր գիտակցական և ինքնուրոյն մի անձնաւորութիւն, այն ժամանակ նա միշտ հաստատ կը մնար իր այդ սովորութեանց մէջ, նա երբեք, ոչ մի զեպքում չէր կարող փոխել իր վարքը, դաւաճանել իր բարոյական համոզմունքներին:

Բայց որովհետեւ մենք տեսնում ենք, որ դանաւան հանգամանքներից ստիպված, նա շատ անգամ փոխում է իր վարմունքի և զօրեղութեանց եղանակը, որ մի և նոյն ժամանակ նա և ազնիւ է և դաւաճան, և պարզամիտ է և խաբարայ, —ուս-

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Փարիզից գրում են, որ արքայական ըրիւնանտները գնելու համար Փարիզ են եկել մի քանի հարկեր հարուստ ուկրաիններ:

—Երբ նոր թիկնածու բազմական դահի համար՝ այժմ մասնաճիւղ են անում Նոտտուտի իշխանի վրա. իշխան Բիւմարի կողմնակից է այդ իշխանի թեկնածութեանը:

—Թէհրանից գրում են, որ Էլ-Բախանի և իր եղբայր Նադուր-խանի մէջ այժմ ջերմ բանակցութիւն է սկսված ազգայնական գործերի այժմեան զրուցեան պատճառով:

—Ինչպէս հեռագրերը արդէն լուր բերեց, Ֆերանսական կառավարութիւնը հրամանագրել է սպառազինել մի զօրաբաժին փորձի համար Այդ բանին Գերմանիայում առանձին նշանակութիւն են տալիս, և համարում են իբրեւ մի դժուար կ'ան նշան պատերազմի համար:

—Շուտով Ելզաս-Լոթարինգիայում պէտք է ընկնին մինչև տասն մարդիկ՝ որոնք մեղադրվում են պետական դաւաճանութեան մէջ. այդ տասն հոգուց մէկը Ֆրանսիացի է, իսկ միւսը շվեյցարացի: Երկուքն են կրում, որ այս զեպքն էլ կարող է բարոյութիւնների պատճառ լինել:

—Պոլսից հեռագրում են, որ անգլիական մի գրահակիր նաւ մոտեցաւ Կրիտէ կղզւում Այն միտքն են յայտնում, որ այդ ցոյցերը անելով Անգլիան ուզում է ճնշում գործել Թիւրքիայի վրա՝ եղիպտական հարցում նրան ղեկող դարձնելու համար:

—Մայիսի 6-ին իտալական պատգամաւորների ժողովը մեծ մասամբ զբաղեցաւ Աֆրիկայի արշաւանքի հարցով: Կառավարութիւնը սկսել է այդ բանի վրա աւելի մեծ ուշադրութիւն դարձնել: Գնեւրայ Սալուտա, որը ուղարկվեցաւ Աֆրիկա, իբրեւ իտալական զօրքի հրամանատար, արդէն պատերազմական դրութեան մէջ է զրել իտալացի վերջածած երկրորդ Մասալան միացված է հեռագրական թիւով խաղաղ հետ: Իտալական կառավարութիւնը համակրութեամբ վերաբերվեցաւ զեպի Սալուտայի առաջարկութիւններին, և չուտով կուղարկել Աֆրիկա էլի նոր զօրք: Հռոմի ղեկավարական շտաբում հիմնվում է մի առանձին բաժին՝ աֆրիկական գործերի համար: Ուղարկվում է մեծ քանակութեամբ զենք և պաշար:

—Դրերում թիւրքաց Սուլթանը նորից ընդունեց ուսուցիչ դեսպան Նիլիզովին, որը յայտնեց Սուլթանին ուսուցիչ կառավարութեան հասցնելու բողոքական խնդրի վերաբերութեամբ:

—Իտալական լրագրիւնները վերջին ժամանակները կրկին սկսեցին խօսել պապի և իտալական կառավարութեան յարաբերութիւնների մասին: Լրագրիւնները այն միտքն են յայտնում, որ կառավարութեան և պապի մէջ հաշտութիւն կարող է կայանալ միայն այն զեպքում, երբ Վատիկանը միանգամայն զիջող զիջը կը բռնի:

տի պէտք է անշուշտ եղբայրացնել, որ զիւրացու բողոք ազնիւ ու առաքելի յատկութիւնները չեն կազմում նրա հոգու իսկական սեփականութիւնը, նրա կեանքի բարոյական տենդենցիան: Եւ այդ ճշմարիտ որ այդպէս է:

Գիւղացու բողոք ազնիւ ու առաքելի յատկութիւնները անբաժանելի կերպով կապված են նրա տնտեսական դրութեան հետ: Առհասարակ ամեն տեսակ պարագայում, այսպէս թէ այնպէս, ուսնելում է իր առանձին, սոցիալիզմական յատկութիւնը, որ անխալալական կերպով ցրվում է մարդու բնաւորութեան վրա և տալիս է նրան իր առանձին, միակողմանի ուղղութիւնը: Ինչպէս որ վաճառականը, իր առուտուրի և կօպէկաւոր մանր հաշիւների ազդեցութեան տակ, կորցնում է մարդկային փետ գաղափարներով ոգեւորվելու ընդունակութիւնը և սկսում է ամեն բանի վրա նայել իր ջնջին, կօպէկներով տեսնելով, այնպէս էլ զիւղացին, պարագլուխ երկրագործութեամբ, ապա մայ կնիքարկվում է իր պարագլուխների աշխարհ և աշխուճացող ոգու ազդեցութեան ներքոյ: Երկրագործութիւնը մի այնպիսի պարագլուխ է, որի մէջ չը կայ ոչ մի ծուռ և անարդար միջոց, որով կարողանայ մարդ նիւթական ապահովութիւն ձեռք բերել:

Այստեղ մարդ կանգնում է երես առ երես ընդհանրական դրուար ոյժերի զէմ, և քանի նա լաւ հասկանալ ընտելեան այդ ոյժերը, որքան մօտիկ ծանօթանալ նրանց զանազան յատկութեանց հետ, այնքան էլ շատ միջոց և կարողութիւն կուսնենայ օգուտ քաղել նրանցից:

—Բօլզարիայի Բախով կոչված տեղում մի թույլ փորձ եղաւ ինստակարութեան դէմ, որը և իսկոյն ճնշվեցաւ:

—Պոլսից գրում են, որ իբրեւ թէ Բ. Գուռը առաջարկել է անգլիական կառավարութեան ներկայացուցչին, որ Անգլիան պէտք է հեռանայ Եգիպտոսից մի տարվայ ընթացքում:

—Փարիզում այժմ խօսակցութեան նիւթ է դարձել հետեւեալը: Ինչպէս յայտնի է քաղաքական պատճառներով՝ Օմայի և Շարտրի դուքսերի անունները հանված են զօրքի ցուցակներից: Այժմ այդ դուքսերը պահանջում են, որ իրանց դարձնեն իրանց աստիճանները, Ֆրանսիական օրէնքների հիման վրա: Այդ օրէնքներով օֆիցերներին իրանց աստիճաններից կարելի է զերկել միմիայն դատաստանական ճանապարհով:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պետերբուրգի լրագրիւնները հաղորդում են, որ կամ Տօլստոյ այս օրերս մասնաւոր կերպով, թատրոնասէրների միջոցով ներկայացնել տուեց իր նոր թատրոնական գրութեանը, որի վերնագիրն է «Власти Тьмы»: Այս գրութեանը ներկայացումը սարսափելի տպաւորութիւն թողեց ներկայ եղողների վրա:

Նորերումս վարչակալի երկաթուղու գծով, Պիւտայ կայարանից Պետերբուրգ ուղևորվեցաւ մի բռնաւորված վագոն, որի վրա խոշոր տառերով գրված էր՝ «խեղդողներն են»: Պետերբուրգ հասնելուց յետոյ այդ վագոնը կասկած չարուցեց, բայց արին և մէջը խեղդողներին փոխարէն զբաղեցնում էին... Դոցա էօսն գնով ուղարկել էին Պետերբուրգ բանելու համար....

Նորերումս, իրանդիայում, Կաստիլիայի քաղաքում, կէսօրից յետոյ սկսեց անձրեւ զալ. այդ անձրեւը միանգամայն սև գոյն ունէր, և ընկնելով մարդոց վրա սեպցնում էր շորերը, և շատ տեղ սև գոյնի փոխեց և քաղաքի շրջերը: Ան անձրեւ զալու ժամանակ չենք ուշում էին, ինչպէս կատաղած, դաշտերի վրա արածող անասունները սկսեցին կատաղի կերպով այս ու այն կողմը փախչել:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՕՎՕԶԵՐԿԱՍԿ, 7 մայիս: Դօնի զօրքը չըրջանում կարգապահութեան խաղաղական հրովարտակը՝ հետեւեալ բովանդակութեամբ, Վլադիմիր Ստոլոնոյ, Մենք Ալեքսանդր Երրորդ, Կայսր և Ինքնակալ Ռուսաստանի, թագաւոր Լէհաստանի, Մեծ Իշխան Ֆինլանդիայի, և այլն և այլն և այլն, Դօնի չըջանի Մեր հաւատարիմ և քաջարի զօրքին: Դօնի զօրքը, որ սկսել է ծառայել Ռուսաստանին դեռ նրա կարողութեան զարգացման սկզբնաւորութեան ժամանակից, երեք

Հմուտութիւն և աշխատասիրութիւն—անա երկու գլխաւոր ֆակտորներ, որոնց վրա հիմնված են երկրագործի նիւթապէս ապահովութեան գլխաւոր պայմանները, ի հարկէ, եթէ աչքի առաջ չունենանք նրանցից բոլորովին անկախ ուրիշ պատճառներ: Եւ անա, չնորհիւ իր ազնիւ աշխատութեան և ալ բողոք մանրամասն հանգամանքներ, որոնք չըջապատում են այդ ազնիւ աշխատութիւնը, զիւղացին, բողոքովին անգիտակցաբար, սեփականել է այնպիսի բարոյական, ազնիւ յատկութիւններ, որոնց իսկական գնահատութիւնը նա երբեք չէ կարողանում հասկանալ: Նրա սպիւնդրական և առաքելութեան գլխաւոր պատճառը նրա արտն է: Արդը հրամայում է զիւղացուն ազնիւ լինել, և նա երկարվում է այդ հրամանին: Նա ազնիւ է, առաքելն է, պարզապէս ազնիւ լինել, և նա երկարվում է իր արտն ազդեցութեան տակ, իսկ ճէնց որ հեռանում է նրա վրայից արտի հովանաւորութիւնը, ճէնց որ նա մնում է ինքն իրա գլխին և տարված է իր նուր գործի իր սեփական բարոյականութիւնով, —այստեղ նա մերկանում է իր ամեն գեղեցիկ յատկութիւններից և դառնում է չարագործ, խաբարայ, դաւաճան, վաշխաւոր և այլն:

Գիւղի մէջ ուսում տարածելու գլխաւոր նպատակն է—հասկանալ զիւղացուն, թէ ինչ է նրա կեանքի և բնաւորութեան մէջ լաւը, աղնիւը, դուրսը և ինչն է աղելը, վատը, պախարակելի: Ալեքսանդրապոլ. Ե. Գ.

հիմք այդ պետությունների ընդհանուր գործողությունների համար: Տեղի ունեցավ Սան-Ստեֆանոյի դաշնագրով հաստատությունները, բայց որովհետև դա չէր համապատասխանում յուրեալ համաձայնությունների պայմաններին, ուստի Աւստրիան հռչակեց իր իրավունքները, և այդ հանգամանքներին մէջ տեղի ունեցավ Բերլինի կոնգրեսը, որից Աւստրիան իրաւորութիւն ստացաւ գրաւելու Բոսնիան և Հերցեգովինան: Աւստրիայի նահանգները գրաւելու անհրաժեշտ էր թէ յիշեալ համաձայնությունների գործողութեամբ, այլ կոնգրեսի վճռով: Այդ գործի զանազան դրութեան վերաբերեալ վերջնական դիտողութիւնները կարելի է արտայայտել միայն այն ժամանակ, երբ կը հրապարակեն համապատասխան դոկումենտները, իսկ առ այժմ անկարելի է, բայց աւստրիական թագաւորականութեան հետեանքը ակներև է: Նորա դրութիւնը թէ արեւելքում և թէ Նորապայտում գէ-պի լաւն է գնացել: Ժողովը ուշադրութեան առաւ Տիւսայի պատասխանը:

ԲԵՐԼԻՆԻ, 10 մայիս: Բանուորները այստեղ կայացած ժողովում բողոք յայտնեցաւ միահա-մուռ գործադուլի դէմ, բայց մի և նոյն ժամա-նակ ժողովը համաձայնութիւն յայտնեց այն մա-նիքի հետագայի առիթով, որը պահանջում է ընդ-հանուր ձայնաւորութիւն և ներուժ:

ՓԱՐԻՉ, 10 մայիս: Պատերազմական միմիս-րը ներքում է այն լուրը թէ եղել են պատգամա-ւորներ, որոնք փորձ են փորձել համադիւր նրան հրաժարել մի գործադուլի փորձական սպառա-զնութեան վերաբերեալ մտադրութիւնը:

ԲՈՒԳՆԱՎԵՆ, 10 մայիս: Պատգամաւոր Իրա-նի, ընդդիմադրութեամբ ձայնով հաւատա-պարտեց կառավարութեան բռնած դիրքը թիւ-քիայի վերաբերութեամբ, հաստատելով որ կա-ռավարութիւնը կործանեց թիւքիային, և ինքն ի-րան զրկեց պատնէշից, հարաւային կողմում: Տիւսա պատասխանեց, որ Աւստրիան կատարել է իր պարտաւորութիւնը թիւքիայի ամբողջու-թիւնը պահպանելու վերաբերութեամբ, այնքան, որքան այդ կարելի էր անել չը վնասելով Բալ-կանեան թերակղզու ջրիտոնեայ ազգերի շահե-րին և ազատութեանը:

ՓԱՐԻՉ, 10 մայիս: Պետերբուրգի նախկին դեսպան գեներալ Լեֆլօ, տպեց «Ֆիգարոյի» մէջ մի յօդուած, որը վերաբերում է 1875 թիւականի անցքերի պատճենական գրաւորութիւններին, յօդ-ւածը ապացուցանում է, որ Ռուսաստանը այն ժամանակ ազատեց Ֆրանսիային Գերմանիայի երկ-րորդ յարձակումից: Հաւատի գործակալութեան հաղորդած կիսապաշտօնական յայտարարումը դատա-պարտում է Լեֆլօյի վարմունքը, և յայտարարում է, որ նա չի չար է գործ դնում հանրապետական կառավարութեան հաւատի շնորհով իր մօտ ե-ղած օտար պետութիւններին վերաբերեալ դոկու-մենտները:

Կ. ՊՈԼԻՍ, 11 մայիս: Երէկ ստորագրվեցաւ անկո-թիւքայ դաշնագրի Եփեսոսի անգլիա-ցիներին հեռանալու մասին:

ՓԱՐԻՉ, 11 մայիս: Լրագիրները կասեցնում են որ Բերլինի յանձնաժողովի նախագահին արդիւնք կազմակերպել նոր միմիստութիւնը և կարծում են որ դա կարող է իրադրուիլ միայն Ֆրէյսինէի ձեռքով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՈՅ

Մայիսի 8-ին

Ռուսաց 1 ռուբլ 1 օնցի	21 3/4	պէնս.
— — — — —	184 3/4	պֆ.
— — — — —	228 3/4	սան.
Ռուբլի — — — — —	9	> 15 կ.
Մաքսային կուպոններ — — — — —	176	> —
Արծաթ — — — — —	1	> 35
Բորսային դիվիդենդներ — — — — —	4 1/8	> 60/0
Պետական 50/0 տոմս 1-ին շրջանի — — — — —	99	> 50
— — — — — 2-րդ — — — — —	99	> 25
— — — — — 3-րդ — — — — —	99	> —
— — — — — 4-րդ — — — — —	99	> 12
— — — — — 5-րդ — — — — —	99	> 12
— — — — — 6-րդ — — — — —	—	> —
Արեւելեան 50/0 փոխառութիւն 1-ին շրջ.	99	> 75
— — — — — 2-րդ — — — — —	100	> —
— — — — — 3-րդ — — — — —	100	> —
Ներքին 50/0 առաջին փոխառութիւն	265	> 50
— — — — — երկրորդ — — — — —	243	> 75
5 1/2 0/0 Բէնտա — — — — —	102	> 37
Ռուսաց Բէնտա — — — — —	196	> —
Եթովպիայի կոնսոլիդացի փոխառու-թիւն — — — — —	99	> 25
Նոր երկաթուղային Բէնտա — — — — —	98	> 75
50/0 գրաւական թղթեր կալուած.		
— — — — — փոխ. կրեդ. ընկ. — — — — —	168	> 25
— — — — — Գրաւ. թղթ. Ազն. բանկ — — — — —	—	> —
5 1/2 0/0 գրաւական թղթեր խորհրդի կալուած. բանկ — — — — —	98	> 75
60/0 գրաւակ. թղթ. Խորհրդի կալ. բան. — — — — —	102	> 50
— — — — — Պոլսական — — — — —	101	> 50
— — — — — Պետ. Տոկատ — — — — —	101	> 75
— — — — — Կիւնով — — — — —	101	> 75
— — — — — Մոսկովայի — — — — —	102	> 50
— — — — — Բեսարաբ. Տոկատ — — — — —	101	> 50
— — — — — Նիսի. Սամար. — — — — —	102	> —
— — — — — Վիլնայի — — — — —	101	> 62
— — — — — Թիֆլիսի — — — — —	27 և 43	> 50
— — — — — Բուխարայի — — — — —	18 և 43	> 50
Վճարական-կալուածի բանկի ակցիաները 657 — — — — —		
Ռուսաց երկաթուղիների ակցիաները 270 — — — — —		
Բիւրիսկ-Վճարական ընկ. — — — — —	101	> —
Ս. Պետերբուրգի թագաւորային օրի-դացիներ — — — — —	95	> 87
Մոսկովայի թագաւոր. օրիդացիներ — — — — —	96	> —
Օղէսայի — — — — —	95	> 25
Թիֆլիսի թագաւոր. կրեդ. ընկ. օրի. — — — — —	84	> 50
Նոր փոխառութիւն — — — — —	85	> —
Ս. Պետերբուրգի բորսայի արամագրութիւնի ֆոնդերի վերաբերմամբ ամուր է:		

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՆՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵՐԱՆՈՑ

(Կուլիս, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամէն օր

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—10—11 Ժ. վերաբերական, վերական և առամի ց.
ԿԻՆ-ԲԺԻԶ ԻՍՍԶԱԿԵԱՆ—9—10 Ժ. կանանց և երեխայոց ց.
ՐՈՒԴԱՌՎԱԿԻ—10—11 Ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻԶ ԿՕՐՕՆԱ—11—12 Ժ. կանանց և երեխայոց ց.
Ա. ԳՈՐԴԱՌ—12 1/2—1 1/2 Ժ. աչքի և ներքին ց.
ՉԱՅԵՎԱԿԻ—12—1 Ժ. ջղային ց. և էլէկտրականութեամբ:
ԱՐՏԵՄԻՎ—12—1 Ժ. երեքաբլթի և ուրբաթ կանանց ց.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—6—7 Ժ.
Հիւանդանոցումն է մահ կարգաւորւող ՄՕԿԵՐԻ
ՎՃԱՐ—50 կ.: Համալսարանի (կոնսիլիումի) համար համաձայնութեամբ:
Հիւանդանոցի վերատեսուէ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Լոյս տեսաւ Ս. Պետերբուրգում, Եւրոպական նոտաներով, «ՔՆԱՐԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ» երգարանը, աշխատանքութիւն ՂԱԶԱՐՈՍ ՔԱԶԱՆԱՅ ՅՈՎ. ՍԵՓԵԱՆԻ, որը պարունակում է իր մէջ ընտիր երգեր, պարերգեր և աղօթքներ, որոնք յարմարեցրած են դաշնամուրի վրա նուագելու: Իւրաքանչիւր օրինակի գինն է ճանապարհաձախսով 2 ռուբլի: Վաճառվում է Թիֆլիսում պ. Յ. Սու-լիանովից: Երաժշտական դրամատիկում և միւս գրաւաճառանոցներում, նոյն պէս և աշխատանքով մօտ: Հասցէն.—Թիֆլիս—Հաւաքար, Ղազարոս քահա-նայ Յովսէփեան:
10—10

ԾԵՄԱՆՈՑ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

ԲՕՏՈՎԻ (Դօնի վրա) ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐԻ

ԱՍԼԱՆԻԴԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ

Մագազինը Գլխաւորապէս փողոցում, Ղալաբարովի տանը, Թիֆլիսում, պատիւ ունի յայտ-նելու պ. պ. ԾԵՄԱՆԵՐԻՆ և ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ, որ փետրվարի 15-ից ներկայ թիւ մինը բաց արինք ծխախոտի առևտուրը, որտեղ կարելի է ստանալ ԾԵՄԱՆՈՑ և ՊԱՊԻՐՈՍՆԵՐԻ ա-մեն տեսակները մեր գործարանից բերված: Մեր ԾԵՄԱՆՈՑԸ իր առանձին յատկութիւնների համար,—լաւ համ, մեղմութիւն և զուրկեան արօմատ, վալիւտ է երկարամեայ հաշակ և մեծ տարածութիւն Ռուսաց կայսրութեան և արտասահմանի շատ քաղաքներում:
Թիֆլիսում նոյնպէս և Վնդլիվկայում մեր ֆաբրիկայի ծխախոտի արդիւնքները մի-նչ և այժմ յայտնի չէին, այդ պատճառով մենք բաց արինք ծխախոտի մագազինը, ցանկանա-լով այդ մեր արդիւնքները երկրի մէջ մտցնել:
ԽՈՆԱՐՀԱՐԱՐ ԽՆԴՐՈՒՄ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐԻ և վաճառականներին առ-տես չառնել ծանօթանալու մեր ֆաբրիկայի արդիւնքների հետ:
Օտարաքաղաքացիների պահանջները կատարվում են շուտ և ճիշդ կերպով, փօսի ծախսը մագազինի վրա է: Պրէյսկուրանները ցանկացողներին անվարձ են ուղարկվում:

Պ. ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՆՎՈՐ ԵՒ ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԶԻՋՈՒՄ:

ԱՍԼԱՆԻԴԻ Եղբայրներ

5—25

ԷԼԻԿՍԻՐ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ELIXIR DENTIFRICE)

ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ՀԱՅՐԵՐԻ

ՍՈՒԼԱՅԻ ԱՐԲԱՑՈՒԹԻՒՆՑ (GIRONDE)



Առամների համար Բենեդիկտեան հայրերից պատ-րաստած էլիկսիրի ամենօրեայ գործածութիւ-նը, մի քանի կաթիլներ ջրի մի կէս բաժակի մէջ, պահանջում է առամները փչանալուց, սպիտակ է դարձնում և պնդացնում է առամ-ները, մաքրում է և պահպանում է ծնօր:

ԳԻՆԸ դորակը 2 և 8 ֆրանկ. ֆոշին՝ արկիւղը 1 ֆրանկ 25 սանտ. Պատա՛ արկիւղը 2 ֆրանկ:
Հիմնադրութիւնը դրոշմվում 1804 թիւից.
Գլխաւոր աղբիւր ՍԵԳՈՒՆ, Բորդօ (Ֆրանսիա).
ԹԻՖԼԻՍԻՈՒՄ ծախվում է պ. Բերլինցի մագազինում և պարֆյումների ուրիշ մագազիննե-րում: Վ.Լ.ԳԻՆԻՍՎԱԿԱՆՈՒՄ. Է. Ա. Էնկէնի և Գ. Ա. Օտիլի մօտ:
19—48 (և. շ.)

ԵՂԲԱՐՑ ԾՈՎԻԱՆՈՎՆԵՐԻ ԵՒ ԸՆԿ.

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ
(Սիւնի փողոց, քարվանսարայ Անանովի)

Վաճառում է և գնում է տոկոսաբեր թղթեր և փոխ է տալիս նոցա գրաւականով (ԻՍԶԱՏՈՄՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻԿՁԵՒ 210 ՐՈՒԲԼԻ)
Փոխադրութիւններ է անում ՄՕՍԿՎԱ, ՕԴԵՍՍԱ, ԲԱԳՈՒ, ԲԱՌՈՒՄ և արտասահմա-նի զանազան քաղաքներ:
16—16 (և. շ.)



Գ. ԿԵՐԵՐԻ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ
Հերոֆոնների ֆաբրիկայի միակ աղբիւր մօտ, Կով-կատում, Միքայէլեան փողոցում, № 84, ստացված են մեծ քանակութեամբ

ՀԵՐՕՖՈՆՆԵՐ

Կատարկադրված, դուրեկան ձայնով, նոյնպէս լա-ւնորութիւն նոտաների Հերոֆոնի համար: Օտարա-քաղաքացիների պահանջները ճշգրտեմամբ և առա-ջին փոստայով են կատարվում: Նոտաների կատա-լոգները՝ թէ Հերոֆոնների և թէ Արիստոմենի հա-մար, ըստ պահանջման ուղարկվում են անվարձ:
5—20

ՎԻԵՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՄ

(Вѣнскій магазинъ)

Գլխաւորապէս պրոպէկտի վրա, Միքայէլի տանը.

Պատիւ ունեմ յայտնելու Թիֆլիսի յարգելի հասարակութեանը, որ մօտ օ-րերս ստացայ ՎԻԵՆԱՅԻ, ՎԱՐՇԱՎԱՅԻ և ՄՕՍԿՎԱՅԻ ամենաառաջնակարգ գոր-ծարաններից մեծ քանակութեամբ ՏՂԱՄԱՐԳԱՆՑ և ԵՐԵՎԱՆԵՐԻ քարտանային և աշխատանքի պատրաստի ՀԱԳՈՒՍՏՆԵՐ ամենավերջին ձևի:
Գները ամենի համար ՄՍՏՁԵԼԻ և ձեռնառու են:
Վ. Խուզալեղեկեան
9—10